

Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ-ի
“Գյուղական Ֆինանսավորման Կառույց” վարկային մասնագետների համար թափուր պաշտոնների
համալրման

Սույն Հետաքրքրության Հայտ ներկայացնելու Հրավերը հետևում է այս ծրագրի համար Ընդհանուր գնումների ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business UN331 թիվ 802, 24 Հունիսի, 2011թ-ին:

Ծրագրի հակիրճ նկարագրությունը

Գյուղական Ֆինանսավորման Կառույցի նպատակն է աջակցել գյուղատնտեսական գործունեության ակտիվացմանը գյուղական տարածքներում՝ փոքր և միջին արտադրողների ու ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական միջոցները առավել մատչելի դարձնելու համար: Ծրագիրը ապահովում է Մասնակից ֆինանսական Կառույցների (Բանկեր, Վարկային կազմակերպություններ) միջոցով գյուղատնտեսության և/կամ գյուղական տարածքների զարգացման համար անհրաժեշտ վարկավորում:

Վարկային մասնագետի հիմնական պարտականությունները և պատասխանատվությունը`

- Ծրագրի ֆինանսական կառույց – գործընկերների կողմից տրամադրվող ֆինանսավորման հայտերի ընդունում, դիտարկում,
- Ծրագրի շրջանակներում Վարկային խորհուրդի /ՎԽ/ աշխատանքների կազմակերպում, այդ թվում ֆինանսավորման հայտերի ներկայացում, որոշումների/արձանագրությունների կազմում և ստորագրությունների ապահովում,
- ՎԽ գործավարությունը, ՎԽ որոշումների/արձանագրությունների պահպանում,
- Ծրագրի շրջանակներում ֆինանսավորված հայտերի վերաբերյալ տեղեկատվության ներմուծում վարկային ծրագիր,
- Վարկային ծրագրի շրջանակներում տվյալների բազայի ստեղծում, կառավարում և ներմուծված տվյալների վերստուգում,
- Ծրագրի շրջանակներում ֆինանսավորված հայտերի մոնիթորինգների մասնակցություն (ՀՀ բոլոր մարզեր, բացառությամբ Երևան) և մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում,
- Ֆինանսավորման գործընթացի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ հաշվետվությունների պատրաստում:

Վարկային մասնագետին ներկայացվող որակավորման պահանջները`

- Բարձրագույն տնտեսագիտական կրթություն
- Առնվազն 1 տարվա փորձ ֆինանսական ոլորտում
- Անգլերենի իմացություն (գրավոր և բանավոր),
- Համակարգչից և ծրագրային ապահովման փաթեթներից (MS Word, Excel, Outlook, etc.) օգտվելու վարժ իմացություն և փորձ,
- Ծանրաբեռնվածությամբ աշխատելու ունակություն,
- Շփման հմտություն:

Մրցութին մասնակցելու համար քաղաքացիները պետք է ներկայացնեն`

- 1) գրավոր դիմում հիմնարկի տնօրենի անունով` նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմող քաղաքացին.
- 2) ինքնակենսագրություն, (CVs) / ներկայացնել հայերեն և անգլերեն լեզուներով/.
- 3) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.
- 4) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.
- 5) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- 6) հայտարարություն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին՝ թափուր պաշտոնին ներկայացվող պահանջների չափանիշներին համապատասխան.
- 7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
- 8) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և գորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք.
- 9) մեկ լուսանկար՝ 3X4 չափսի.
- 10) անձնագրի պատճենը.
- 11) 2 բնութագիր (երաշխավորագիր).
- 12) աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (պատճենները) կամ սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանք:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-17.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչ 2015թ. նոյեմբերի 24-ը, ժ. 17.00:

ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Հասցե: ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ:

Հեռ/ֆաքս/էլ.հասցե. 37410 – 54-65-10

e-mail: procurement@raed.am; Web site: www.raed.am

Մրցույթի անցկացման օրը և ժամը՝ 2015թ. դեկտեմբերի 09–ը, ժ. 15.00:

Հարցազրույցի փուլ անցած մասնակիցներն էլեկտրոնային փոստի միջոցով կհրավիրվեն հարցազրույցի:

Մրցույթի անցկացման վայրը՝ վերոնշյալ հասցեում: